




Յարեան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միւսայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакеъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առիթ օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գեորգ Բաշինջաղեանի
նոր նկարներ. Նամակ Ալեքսանդրապոլից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմա-
կան վիճակագրական տեղեկութիւններ. Տեղեկու-
թիւններ թուրքաց չափաւորանից. Արտաքին լու-
րեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍՍ.
—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ե-
նիչերի.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՈՐԳ ԲԱՇԻՆՋԱԳԱՆԻ ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ

Այս օրերս առիթ ունեցանք տեսնել մեր նկա-
րիչ պ. Գեորգ Բաշինջաղեանի արուեստանոցը:
Չորս հաս նոր իւղանկարներ աչքի են ընկնում
մեր նկարչի բազմաթիւ ստեղծագործութիւնների
մէջ.

1) Յորենի արտը, որի կէսը հնձած է արգէն և
տեղ-տեղ խորճեր են կանգնած, իսկ միւս կէսի
ոսկեգոյն հասկերը փայլում են մայր մոնող ա-
րեգակի ճառագայթների տակ: Գեղեցիկ պատկեր
է, բայց մեր կարծիքով Բաշինջաղեանի վրձինի
բուն ժանրը չէ: Մեր նկարչին ոչինչ այնքան
չէ աշողովում պատկերացնել, որքան ջուրը, մա-
նաւանդ խաղաղ դրութեան մէջ ջուրը՝ լինի դա
գետ թէ ծով:

2) Լուռ գաւառի Սանահնի ձորը, գիշեր ժա-
մանակ: Այս Բաշինջաղեանի բուն ժանրը.
Գեղեցիկ գետը ուր մոլոր անցնում է նեղ և
ժայռոտ ձորով. ջուրը լուսաւորւելով ամպերի մի-
ջից նայող լուսնի արծաթափայլ շողերով, փր-
փռւելով վազում է ջրերի վրայով և այդ պայ-
ծառ ժայռաւանդ մի նկարչական հակասութիւն է
կազմում շրջապատող մուգ ժայռերի և ամբողջ
ընտելեան մթնոլորտի հետ: Խաղաղ և ոսկեգոյն
շրջանակը շատ սաղում է մոլոր պատկերին և ա-
ւելի բլրի է քի է դարձնում պատկերը:

3) Վրաց բանաստեղծ Ծառա Բուստաւելիի
վազրի մորթի՝ պոեմայից վերցրած մի անցը.
դա այն տեղն է, երբ երկու նեղիներ, Սև ծովի
անայտ փոխ են իջնում գեղեցիկ հուն, որը
դատապարտւած էր իր ամբողջ կեանքը նաւա-
նով շրջել ծովի կատաղի ալիքների վրա, առանց
իրաւունք ունենալու որ և է ժամանակ ափ իջ-
նելու: Որիորդը, որի ոչ թէ միայն դէմքը, բայց

և նոյն իսկ ամբողջ դիրքը տեղեկութիւն է արտա-
յայտում, յուսահատուած կանգնած է անայտ ա-
փի վրա, իսկ երկու յաղթանդամ, մերկ նեղիները
մոտենցում են նաւակը նոյն ափին, սեպեր խփելով
ծովեզրի վրա և չուանով կապելով նաւակը այդ
սեպերին: Ծովը հանդարտ է, այնպէս որ բոլոր
առարկաները թէ անդադառնում են ջրի մէջ,
որպէս հայելիի մէջ և թէ մի և նոյն ժամանակ
իրանց ստուէր են գցում ջրի հանդարտ մակերե-
ւոյթի երեսի վրա: Գլխողութիւն և բնութեան
երևոյթների խոր ուսումնասիրութիւն է հարկա-
ւոր՝ նկատելու համար որ միաժամանակ երկու
տեսակ ստուէր կարող է ընկնել ջրի վրա, և որ
այդ տեսակ երևոյթ կարող է պատահել միմիայն
ջրի հանդարտ եղած ժամանակ և միմիայն արե-
գակի ճառագայթների ջրի մակերևոյթի վրա:
Թեք կերպով ընկնելու ժամանակ, այսինքն կամ
առաւօտեան արշալոյսի, կամ արեգակի մայր
մոտենալու րոպէին: Պատկերը ներկայացնում է ա-
րեգակի մայր մոտենալու րոպէն, երբ ամբողջ բը-
նութիւնը կարմիր լուսով է լուսաւորւած... Պատ-
կերի աջ կողմում, ամայի ծովեզրի հեռաւորու-
թեան մէջ երևում է խիտ այգիով շրջապատ-
ւած մի շէնք ապարանք: Պատկերը աւելի էլ գե-
ղեցիկ կերպար, աւելի բլրի է քի է լինել, եթէ
ոսկեգոյն շրջանակի տեղ նա դրված լինէր սև կամ
մոյգ շրջանակի մէջ:

4) Գեղանայ ծովը հանդարտ ժամանակ: Տե-
սարանը վերցրած է ծովեզրի վրա գտնւած Ծա-
ռաքանդի գիւղից, որի ճիշդ դիմաց, մի կէս
վերտ հեռաւորութեան վրա, ծովի մէջտեղ
գտնւում է Սևան կղզին իր վանքով. ծովը կա-
տարելապէս հանդարտ է, ողջ թափանցիկ և մա-
քուր, մի քանի նաւակներ և առագաստաւոր նա-
ւեր երթնելում են ծովի վրա և իրանց ետեղից
մի գիծ, երկու ժայռաւանդի պէս մի հեռք են գո-
յացնում ջրի հանդարտ մակերևոյթի վրա: Գլխա-
ղի ափերը ծածկւած են մառախուղով, իսկ աջ
կողմի սարերի վրա, ամպերից մինչև սարերի գա-
զաթը սև չորտի գոյացնելով գալիս է յորդա-
ռատ անձրև... Այդ անձրևն ու մառախուղանակը
հեռաւորութեան մէջ աւելի էլ նկատելի են դարձ-
նում: Ընտելեան հանդարտ և պարզ լինելը պատ-
կերի առաջին պլանում: Թէ այդ պատկերը և թէ
վազրի մորթի՝ պոեմայից վերցրածը մտ մի քա-
նակուր ստեղծի մեծութիւն ունենա՞ն: Սեանի ծովը
ներկայացնող պատկերը աւելի էլ Նրապոլի
տպագրութիւն է գործում նայողի վրա, օրովն-

տն սև և ոչ թէ պայծառ շրջանակի մէջ է դրված:
Վերջանում են մեր խաղը, շնորհաւորե-
լով մեր ընդմիջւոր նկարչին իր վերջին եր-
կու ստեղծագործութիւնների առիթով: Գովե-
լի է պ. Բաշինջաղեանի տոկոսն աշխատա-
սիրութիւնը և անուրանալի է որ երկտեսարդ
նկարիչը մի քանի տարվայ ընթացքում մեծ ա-
ռաջադիմութիւն է արել իր արուեստի մէջ,
միշտ հաւատարիմ մնալով նկարչութեան իր մի
անգամ ընտրած ժանրին՝ ընտելեան հանդարտ և
խաղաղ տեսարանների նկարչութեան:

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅ

Օգոստոսի 20-ին

Աւելորդ է ասել, թէ որքան անհրաժեշտ են
երթնել հիւանդների համար բուժարանները և
ընդունարանները միջին և ստորին դասակարգե-
րի համար: Այդ դասակարգերը չունեն այնքան
կարողութիւն, որ կարողանան ամեն մի հիւան-
դութեան դէպքում առանձին բժիշկ հրաւիրել,
վճարելով կաթիլ, այցելութեան և դեղերի փողե-
րը: Բայց որքան աւելի անհրաժեշտ են այդպիսի
ձրի կամ էժանադին բժշկական հաստատութիւն-
ները Ալեքսանդրապոլի համար, այն ժամանակ
միայն պարզ կը լինի, երբ աչքի առաջ ունե-
նան, որ այս քաղաքը չունի հարստութեան հա-
մարեա ոչ մի բնական աղբիւր: Երբայդ յայտ-
նի է իր հացով, բայց քաղաքացի շատ քիչ հող
ունի (այդ եղանակ էլ երկար ժամանակ անընդ-
հատ ցանելուց ուժանագործ է կոչւած) ցանելու
համար և ցանողներն էլ կազմում են մի քանի
տասնեակ տներ միայն, այնպէս որ քաղաքացի-
ների ամենամեծ մասը պարապում են արհեստ-
ներով և փողը, չարահանա՞ն վաճառականու-
թեամբ: Բայց արհեստաւորը, քաղաքացի կրկա-
գործը (առաջապար) և չարահան վաճառականը, առ-
հասարակ, ինչպէս ժողովուրդն ասում է՝ օրտա-
կան դադում, օրական ուտում են: Դրանք չեն
կարող անել հիւանդին համար պահանջված ան-
հրաժեշտ ծախսերը, եթէ կարողանան էլ, նրանք
չեն սովորել, չեն ընտելացել այդպիսի ծախ-
սերի. նրանց կարծիքով այդ ծախսերը շատ աւե-
լորդ են. հարկաւոր է, որ այդ ծախսերը շատ
քիչ չափով լինեն, կամ բոլորովին չը լինեն:

Այս հէնց այդ էր պատճառը, որ օրտա-
կարի առաջ, երբ, շնորհով զինուորական ըը-
ծիչի պ. Պաւելի, իր յարգելի ընկերների և

մասնաւոր դեղատան տէր պ. Ջորդեանցի, բաց-
վեց տեղում մի մասնաւոր ընդունարան՝ դա-
բաւական մեծ բարերարութիւն էր քաղաքին մի-
ջին և ստորին դասակարգերի համար:

Յարգելի բժիշկները որոշել էին հերթով ամեն
օր լինել ընդունարանում: Ժամի 10-ից մինչև
1-ը, չը վերցնել ոչ մի վարձատրութիւն աղքատ-
ներից, իսկ դեղատան տէր պ. Ջորդեանցի համա-
ձայնել էր աղքատ բժիշկներին 40% զիջումով
դեղեր տալ: (Նիւրնբարնի) փոքրաչափ անհա-
ժեշտ ծախսերը ծածկելու համար՝ պ. պ. բժիշկ-
ները իրանց յոյսերը դրել էին փողը ի շատե ու-
նեւոր յաճախորդների կամաւոր նուէրների վը-
րա: Բայց այս ևս յայտնի է, որ մեր հասարա-
կութեան մէջ, երբ բանը հասնում է կամաւոր
նուիրատուութեան, ամենը յետ են քաշվում
կամ աղքատ ձեռքնում Այդպէս էլ եղաւ այս
դէպքում. այդ հիւանդութիւնը այժմ գտնւում է
նիւթական ամանանդ զրութեան մէջ:

Ընդունարանը այժմ իր գոյութիւնը պահ-
պանում է միայն շնորհով պ. Պաւելիի. այս
պարտին հետ գործի սկզբում եղած անձնաւորու-
թիւնները յետ են քաշվել, ամեն ինչ թողնելով
միայն այդ պարտին վրա: Գովելի է պ. բժիշկի
հաստատուն եռանդը. ամառվան այս երկու ա-
միսները պարտը հասնում է իր բոլոր գործերին
և, բացի դրանից, ամեն օր առաւօտեան ժամի
10-ից—11/2 կամ 2-ը գտնւում էր ընդունարա-
նում, ուր ընդունում էր բոլոր զինուորական
ուրախութեամբ, հարկը պահանջած ժամանակ
մինչև անգամ դնում էր հիւանդներին տները:

Այժմ շատ շատերը հաւանական են գտնում,
որ, չը նայելով յարգելի բժիշկի եռանդին, ըն-
դունարանը ստիպւած կը լինի կարճ ժամանա-
կում փակվել, եթէ տեղական երկրաստորութիւ-
նը կամ առաւօտաբայ հասկացող դասակարգը չը
մտածեն մի օր և է կերպով օգնել այդ հաստա-
տութեանը նիւթապէս:

Օգնել կարելի է շատ միջոցներով, բայց լաւ
չէր լինի, որ Ալեքսանդրապոլիցիները վերջապէս
ամառէին կաղզուանդներից կամ գործիչներից,
որ մինչև այժմ չունեն բարեգործական ընկե-
րութեան ճիւղ, որը իսկոյն օգնութեան համար
այդպիսի անհրաժեշտ դէպքերում իսկ մինչև
այդ բանի գլուխ գալը, իմ կարծիքով, ամենա-
հնչառ միջոցն է ներկայացունենք տալ յոգուած
ընդունարանին:

Գր. Խաթակ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՆԻՉԵՐԻ

(Թիւրքաց հայերի կեանքից)

2.

Այս դէպքերից մի ամիս յետոյ, մի շաբաթ օր,
երբ սրբազան առաջնորդը եկեղեցուց վերադար-
ձել և օթոցի մէջ ընկղմած սուրճ էր խմում, ծա-
ռան ներս մտնելով, յայտնեց որ մի ծերունի
թախանձագին խնդրում է տեսնել սրբազանին:

—Ինչպէս է հաջնւած, հարգեց սրբազանը:

—Գրիգոր աղայի տղան է, թագաւորու աղան:

—Հա, ժպտեց սրբազանը—Թող ներս գայ:

Մի քանի րոպէից յետոյ սենեակն է մտնում
մի շատ խեղճ հագնւած կործարմակ, խորշո-
մուտ ճակատով, գունաթափ և բոլորովին սպիտակ
մազերով ծերունի...

Որչափ փոփոխութիւն... առողջ, սև մազերով և
զուարթ գէղեցիկ թաղաւորը այժմ եղել էր մի
խղճալի ծերունի, յենած փայտի վրա, փայտ, որը
նա դրեց մի անկիւնում, արդաստաղին մօտեցաւ
սրբազանին, չորեք, համբուրեց նրա աչքը և դո-
ւնց զողովուն ձայնով:

—Սրբազան, եկել եմ քեզ մի հարցմունք անել:

Լու, քեզ նեղութիւն չը պիտի տամ, չուտով
պիտի երթամ...

—Խօսիր, որդի, ասաց սրբազանը—Խօսիր ինչ
է ցաւդ:

—Ես, ժպտալով դառնութեամբ ծերունին—ես
ցաւ չունեմ այլ ևս, ինչ մնաց ինձ ցաւելու...
ցաւ չունեմ, սրբազան, այլ մի հարցմունք...

—Ասեմ,

—Հարցնում եմ, մեր եկեղեցու մէջ օրէնք կայ,
որ քահանան իրան խոստովանածը ասէ ուրիշի,
եթէ կայ—ես իմ հաւատս կուրանամ, եթէ չը
կայ—նորէն կուրանամ... պատասխանիր, սրբա-
զան, ասա ինձ, օրէնք կայ թէ չը կայ... կեր-
թամ կը փորձեմ պաշտել մահմետականների Աստ-
ւածը... կերթամ մահմետական կը լինեմ, մի փո-
թով կը փաթեմ զլիսի, եկեղեցիի հազուստ
կը հագնեմ, դռնէ դուռ կընկնեմ, կը զարնեմ, կը
փչիմ, կառնանդեմ, կը սպանեմ և սպա կեր-
թամ կաղթեմ նրանց Աստուծուն... Երբեք մեր
եկեղեցական օրէնքները և ծեսերը... ո՞վ է այդ յան-
դուցիր... Սրբազան... ասա ինձ, մեր եկեղեցու
մէջ կայ օրէնք որ քահանան իրան խոստովանա-
ծը յայտնէ, եթէ կայ—այս րոպէիս կերթամ մա-
մետական կը լինեմ, եթէ չը կայ—նորէն կեր-
թամ...

Նա լռեց, արտասուեցր առատօրէն հոսում էին
նրա աչքերից և սրբազանը ապշած չը գիտէր
ինչ պատասխանել:

—Այո, շարունակեց ծերունին—մենք գանգա-
ւում ենք թիւը եկեղեցիներից, որ նրանք կողոպ-
տում են, անպատեւում են, սպանում են... մինչ-
դեռ խեղճ յիմարներս, չը գիտենք որ մեր եկե-
ղեցիները աւելի սոսկալի են, եթէ եկեղեցիի պիտի
անպատեւել իմ հարսին դուռով, այժմ, մեր եկե-
ղեցիի շնորհիւ, հարսս պիտի գնայ իր պատեւը
ծախելու իր կամեցող... հա, հա, հա... ապրելու
համար, որովհետև Գրիգոր աղայի օրդինները այլ
ևս օրվայ հացի կարօտ են և եթէ չեն մօտում,
զրա պատճառը դեռ ևս մեզ մնացող ամօթն է...
որին ոչ ոք կարող է խել մեղինք...

Սրբազանը շիթովել էր, չը գիտէր ինչ ասել.

չարմեցաւ տեղից և կմկմալով ասեց:

—Որդի, ասածներդ ոչինչ չեն հասկնում...
պարզ խօսիր, եղածը պատմիր ինձ, ցաւեդ ասա
ինձ...

Ծերունին լռեց, պահ մի առաջնորդին նայեց,
սրբեց արտասուեցր, ստացաւ մի յուսահատ լըր-
ջութիւն և ասեց.

—Ուրում ևս իմանալ, սրբազան... շատ լաւ
ուրիշն լսիր...
Մեր տուն մտաւ մի օր մի թիւը եկեղեցիի
կերպար, խմեց, յետոյ եղջուր կնո՞ւ ուղեց... եղ-
բայրս էլ չը զիմացաւ իր կնո՞ւ ճիւղերին, դարկաւ
սպանեց եկեղեցիին և ինքն էլ խնմեցաւ...
այս է բոլորը... սրբազան, մի մարդ սպանեց
մեր տան մէջ, մի խեղճ, այո մի շատ խեղճ ե-

նիչերի... այս է թիւը եկեղեցիի պատմութիւ-
նը... Այժմ լսիր, ես քեզ կը պատմեմ մի ուրիշ
աւելի սոսկալի, աւելի կատաղի, արարածի մա-
սին որ մի հայ է, սրբազան, մի քահանայ է,
սրբազան, մի քահանայ, լսեմ ես, մի քահանայ:
Եւ նա այնպէս որոտում էր կատաղութեամբ,
որ նրա աչքերը կարծես պարտաւոր էին դուրս
թափելու ականակապիճներից. նրա քամակը ուղ-
ղվել էր, նրա գունաթափ դէմքը կապտել և նրա
շրթները երբեք ամբարային տարիս պէս զողովում
էին...

Սրբազանը վախենում էր, բայց զսպեց իրան:

—Այո, մի քահանայ, մանչեց ծերունին—որը
լռեց իմ խոստովանութիւնը, սրբազան, և օգուտ
բաղելով դրանից, կողոպտեց ինձ օտից մինչև
դուռ... Խաղաւոր աղայից չինեց ինձ մօտաց-
կան խաղաւոր և ստիպեց իմ հարսներին, իմ
մօրը այսօր տան մէջ անօթի անցկացնել... Ե-
րբեք հարսներս պտենելու համար կընկնեմ և մայրս
զերեցման... խեղճ եկեղեցիի ինչ էիր դու տէր-
Մարտիրոսի առջև... Թող զպիր և նրանից սո-
վորէիր եկեղեցութիւնը...

Յանկարծ լռեց, ողբի ելաւ, առաւ իր գաւա-
ղանը, պահ մի լուսնեմը նրա վրա յենած սըր-
բազանին նայեց և շարունակեց.

—Սրբազան, պատմութիւնս իմացրու... ան-
ասում եմ քեզ, որ վաղը պիտի գամ իմ հարե-
րես պատասխանի համար: Կրկնում եմ եթէ մեր

ՆԵՐՈՒՆԻՆԻ ԼՈՒՐԻՆԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ մեզ գրում են. «Իրաւաստեաների ընտրութեան ազդեցական շարունակութեամբ է շատ մարդիկ, որոնք ընդունակ են անաշուտ գործելու, իսպառ հրաժարուիմ են ընտրութիւններին մասնակցելուց: Եթէ այդպէս շարունակվի, գուցէ ոչ մի ընտրութիւն տեղի էլ չի ունենայ. այն ժամանակ ահագին խայտառակութեան ասպարէզ կը բացվի: Թող զոյգ լինեն պարոնները և խնայեն հասարակութեան պատիւը»:

ԲԱՐՈՒՆԻՆԻ մեզ գրում են. «Ամսի 6-ին մի անաշուտ հայ երիտասարդ, որը բաւարար ուժիկ էր ստանում մի պարսկի գրասենեակում, անձնասպանութիւն գործեց քաղաքիս (Գրանդ-Օտել) կողմէն հիւրանոցի համարներում Ասում են, որ հանցուցեալը նշանակած էր մի գերմանուհի օրիորդի հետ, բայց բժիշկը խորհուրդ չէր տալիս նրան ամուսնանալու, պատճառ բերելով երկտեսակութիւնը: Անձնասպանը իր բարեկամներին անուշով մի քանի նամակներ է թողել, որոնց մէջ անձնասպանութեան միակ պատճառը վերագրում է իր աննպաստակ և ձանձրացուցիչ կեանքին»:

Հետեւեալ տղեղ երեկոյթի մասին են գրում մեզ Ղարաբայի. «Մեր քաղաքում սկսում են երեւան դալ զանազան զգլիկ և միանգամայն անպատեւրբ երեկոյթներ: Ղեւն անցեալ տարվանից սովորութիւն էր դարձել փողոցներում պատերի վրա կայցնել զանազան անվայել զրուածքներ և մինչև անգամ ուղարկել քաղաքային փոստով անստորագիր նամակներ զանազան պատեւուր մարդկանց: Այժմ մի նոր տեսակ անխիղճ ու դատարարեղի երեկոյթի ենք հանդիպում: Չը գիտենք ինչից զրոյթած մի քանի անյայտ և անբարեխիղճ անձինք սկսել են հայոց օրիորդաց դպրոցի և ուրիշ տների պատերի վրա կայցնել, կեղծ ստորագրութեամբ թղթեր, որոնց նպատակն է արատ զցել դպրոցի վրա ընդհանրապէս: Այդպիսի միջոցով անխիղճները ուղարկել տգէտ ժողովուրդին, հասկացնելով իրը թէ օրիորդաց ուսումնարանը վընասակար է և աղջիկները վարքը փչացնող: Այսպէս ան մի քանի մայրեր, ինչպէս լսում ենք, չեն ուզում իրանց աղջկերանց ուսումնարան ուղարկել: Թորոքող ենք տալիս այդ տեսակ մայրերին, չը խորհն սուտ և հնարովի լուրերից և չը վնասեն իրանց երեխայոց կրթութեանը: Դրա հետ միասին անկասկած պէտք է աշխատել վերջ տալ վերոյիշեալ փողոցային խայտառակ արարքներին»:

ՀԻՆՆԱԽԻՉԵՒԱՆԻՆԻ մեզ գրում են. «Մեր տաւորակները մանաւանդ սրանցից մեծերը՝ հարուստները, թէ հայերից և թէ թուրքերից, ապրանքներ ստանալով, դարձում են նրանց իրանց խանութները առաջ, այնպէս որ առանց այն էլ նեղ շորտանները, աւելի նեղանում են և անցուղարձ անելու տեղ չէ մնում, յաճախ մի անցորդի

համար էլ ճանապարհ չը կայ: Առաւել մեծ նեղութիւն են կրում համայնքը, որոնք բնականաբար վաճառելով հեշտութեամբ կարող են ընկնել և բնութի տակը մնալ: Եւրոպայի տակտոներ, փայտեայ դատարկ արկղեր, սանդուղներ և ձեռագործ ապրանքի հակեր, մի խօսքով ինչ որ ցանկանում էք, դուք դարձած կը գտնեք նեղ շորտաններում: Այս հանգամանքի վրա դարձում ենք Խոտիկանուշուրում (մեծ) վաճառականները առանձին ամբարներ ունենան յատկապէս ապրանքը դարձնելու համար: Խոտիկանութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք և կեղտոտ փողոցները ու անասնաբան քաղաքի վրա: Երբեմն երեւին օտարականները, դէպքում և նրանց ծառաները ստիպելով հրամայում են աղքատ թուրքերին և հայերին ձրիաբար աւելի փողոցները. դարձանում ենք ո՞վ է տուել դրանց իրաւունք այսչափ կամայորէն վարվել թշուառ մարդկանց հետ»:

ՋԱՆԳԵՐՈՒՄԻՆԻ մեզ գրում են. «Աւաղակների կողմից լրբութիւնը վերին աստիճանի հասած է այս կողմերում: Պատահելով գիւղացուին, աւաղակները խլում են նրանից նրա միակ բանոր ձին, յետոյ դիւղացուն անօրինաբար հրամայում են, որ գնայ իր ձիւն արժողութեան կէս գինը բերի տայ ու ձին յետ ստանայ, իսկ հակառակ դէպքում նրան սպառնում են: Սրանից յետոյ ինչ անէ խեղճ գիւղացին, ինչ հողը տայ զլինի. նա ակամայ պիտի այստեղից կամ այնտեղից (վերադառնալով) և պարտ եմ անի 50 լուրի, որպէս զի դրանով յետ բերի իր 100 լուրին արժողութեան ունեցող ձին և կատարի սպառնացողների կամքը: Եւ այդ ոչ թէ մէկի կամ երկուսի հետ է պատահում, այլ շատերի հետ: Ոչ մի տարի աւաղակները չէ եղել այսպէս տարածված, որպէս հիմա: Հաշուում են, որ աւաղակների թիւը 20-ի է հասնում, որոնք մեծ ահ ու սարսափ են զցել մահալում: Թագա-դեզ հայաբնակ գիւղը, որի վրա գիւղերը աւաղակները յարձակուին են տրել և սպանել 4 մարդ, դրամական տուրքերի ենթակա զին ինչ անաղակները: Գլխաւոր աւաղակները հիմա համարվում են Եւլու բանտից փախստական տաժանակիր աշխատանքների դատաւարութեամբ 7 հոգի, որոնց մէջ իրանց քաջութեամբ յայտնի են Թաւադ-բեգը և 70 տարեկան ծերունի Զիւրաթը: Մօտերումս Սիսեան մահալում ձերբակալվեց Լայիկի յայտնի աւաղակապետը. նրա ցուցմունքով իր ընկեր Սիսեանդարը սպանվել է յատուկ իր ձեռքով. բայց գործին տեղեակ մի քանիսը ասում են, որ դա սուտ է. Սիսեանդարը իր առատ հունձը անում է Պարսկաստանում»:

ՀԻՆՆԱԽԻՉԵՒԱՆԻՆԻ մեզ գրում են. «Այս օրերս Հին-Նախիջևան եկա հայրենիքից տասնակ տարիներով հեռացած և այդ ժամանակամիջոցում վաճառականութեամբ կապիտալ ղեկած թուրքացի մի պարոն, որը Ռուսաստանում միանալով մի ինչ որ ինժեների հետ՝ այստեղ Անդր-

կովկասում կամենում է ոսկու հանքեր որոնել: Դրանք արդէն ձեռնարկել են գործին. մի սաժէն երկայնութեամբ ու լայնութեամբ հոր է փորվում Հին-Նախիջևանից ոչ հեռու Զուլփայի վրայով Պարսկաստան տանող արձանական ճանապարհի մօտ՝ Նոխիջևան գետի աւաղների մէջ: Հորի խորութիւնը այժմ 3-4 արշին է հասնում. երկու արշինից ջուր երևալ հորի մէջ, բերած մի հատիկ ջրհանով (ԵԱՐՈՇԵ) զօռարանում են ամբողջ ջուրը դուրս թափելու: Ինժեները մեծ յոյս ունի աշողութեան վրա, ուստի անընդհատաբար գլխի ու ցրեկ աշխատելը շարունակվում է: Հորի խորութիւնը տասնեակ տոմէշներին էլ պիտի անցնի, հողի բոլոր շերտերը պիտի ընկնեն, զննվեն: Այստեղի փորձից յետոյ յիշեալ պարոնները ուղեորվելու են գետի միւս կողմերում ևս մի քանի փորձեր անելու: Հորից հանած աւաղի մի որոշ մասը ջրի միջոցով անմիջապէս լուծվում է զանազան մասերին: Այժմ աննշան քանակութեամբ ոսկու և երկաթի փշրանք է երևում, դոնկած քարերը նոյնպէս ենթակալվում են զննութեան: Վերոյիշեալ տեղեկութիւնները պատրաստել էի ձեզ ուղարկելու, բայց այս րոպէիս, օգոստոսի 28-ին, հաւաստիացայ թէ յուսահատված ձեռնարկողները հորի ջրի շատանալու պատճառով թողնում են ընդմիջտ այդ ձեռնարկութիւնը: Թէ որքան անկեղծ է այդ մտադրութիւնը՝ երաշխաւորել չենք կարող: Նրանք հեռանում են, իսկ բոլոր գործիքները այստեղ թողնում. հաւանական է, որ եկող տարի գարնանը դարձեալ շարունակվի արդէն ըսկած գործը նոյն պարոնների նախաձեռնութեամբ: Գուցէ նրանց հեռանալու գլխաւոր պատճառը ձեռնվայ մօտենալու ու գործիքների քլուխեան մէջ է կայանում»:

Մեզ գրում են ԲԱՐՈՒՆԻՆԻ, որ այդտեղի հայ կանայք և օրիորդներ ցիտաւորութիւն ունեն դիմել կառավարութեան, որպէս զի թողտուութիւն ստանան Բաղուի մէջ Թիֆլիսի նման մի Հալոհանց բարեգործական ընկերութիւն հաստատելու:

Արտիստական ընկերութեան գործերը շատ վատ են գնում: Նոր կազմված օպերային խումբը միայն անբաւականութիւն է յարեցանում հասարակութեան մէջ: Ներկայացման ժամանակ շփոթեցրել, որ վաղուց չէին լսվում Թիֆլիսի թատրոնում, այժմ դրեթէ ամեն ներկայացման ժամանակ կայացնում են զերեկցիայի և դերասանների ակամայնեցը: Կիրակի, սեպտեմբերի 10-ին, խաղում էին «Եւդենի Օնեգին» օպերան: Հաջիւ թէ մեր հասարակութիւնը մի այլ անգամ լսած լինի այդ օպերան այնքան վատ: Տ. Զարուհայա աւելի թոյլ էր, քան անցեալ տարիներում. նրա ձայնը բաւական մաշված էր երևում: Տ. Լիւբաւովիչի ձայնը զրեթէ չէր լսվում: Տնօր պ. Սամոյլով իր խուլ և ճնշված ձայնով ողորմելի տղաւորութիւն էր թողնում: Պ. Մոլոնովսկի կարծես այնպէս էր երգում: Միայն պ. Տարտակով և մասամբ երկրորդական դերասանները, որ օր մի գերեզման փորեցին և Գրիգոր աղայի կնոջ՝ Խաչատուրի ու Սեդրակի մօր դադար մի քանի մշակներ նրա մէջ դրին... Ասում են թէ Սեդրակի կինն էր այն նշանաւոր պոետիկը, որին Հեօլիլի թաղի բնակիչները քիչ մնաց քարկոծէին և որը Պոլսի գնաց դրանից յետոյ... Արդեօք տեսնող եղբէ է նրան Ղալաթիոյ պոետնականների մէջ... Իսկ մինչև 1868 թ. աւաղներ դեռ ևս կ. Պոլսի Ս. Փրկիչ հիւանդանոցի խնամապետութեամբ կարելի էր տեսնել մի սպիտակ հագած կորաքամակ ծերուկ խնամի, որը իրան յանձնված աղքատ սակաւը շալակելով հանդերձ գոյում էր միշտ կատաղի ձայնով. — Թէ կայ—կուրանամ, թէ չը կայ—նորէն կուրանամ... Խաչատուրի էր, որին մի օր յանկարծ հիւանդանոց բարձրացրին, վերցնելով պատի տակից, ուր նա ընկել էր. մի քանի օրից յետոյ պատանքով փաթկալեցին, զրին նաչի մէջ... Չորս խնամքը շալակելով դադարը վաղէ վաղ դէպի գերեզմանատուն տարան, ուր քահանան մի քանի աղօթք կարդաց նրա վրա և խնամքը իրանց խնամական երգերը երգելով, հողով ծածկեցին նրան... Վ. Փափաքան

օր. օր. Աւաղով, Բիչուրինա և պ. Կորստաւաչիկի լաւ էին: Օրիգետերի մէջ, որը Չալովակու օպերաներում, մանաւանդ «Եւդենի Օնեգին» մէջ փորը դեր չէ կատարում, մի կատարեալ խառնաշփոթութիւն էր տիրում: Նոյնը կարելի է ասել և կվարտաների և ուրիշ համերգերի մասին, որոնց ժամանակ երգիչները երգում էին միանգամայն միմեանց հետ չը յարմարվելով և կարծես ամեն մէկը իր համար: Ետտ հասկանալի է, որ այդ տեսակ ներկայացումները հաճոյք չէին կարող պատճառել հասարակութեանը, որը իր կողմից ոչ թէ միայն սառն էր դէպի դերասանները, այլ և սաստիկ կերպով շփոթում էր: Անբաւականութիւնը այն տեղին էր հասել, որ մի գործողութիւնից յետոյ սկսել էին լսել, որ մի կանչել բեմից օր. Թիֆլիսի Այս շաբաթ առաջին անգամ պիտի երգէ դրամատիկական օպերան Թիֆլիսի Լատերներ: Սպասում են երկու փառապաշտեաններին, և յոյս կայ որ այն ժամանակ օպերային գործերը կարգին գնան:

Մեզ հաղորդում են, որ ռուսաց լեզուի վարժապետների պակասութիւն է գրացվում հայոց դպրոցներում: Ետտ տեղերի դպրոցներ դեռ չունեն ռուսաց լեզուի ուսուցիչներ, իսկ այդ լեզուի դասատուութեան իրաւունք ունեցող պարապ վարժապետներ էլ համարիա բոլորովին չը կան:

Կովկասեան ցուցահանդէսի բաժինները արդէն պատրաստվում են, աշխատանքները շատ եռանդուն կերպով են առաջ գնում, որպէս զի մինչև բացման օրը, այն է սեպտեմբերի 15-ը, պատրաստ լինեն Պալիթիոններից մի քանիսի մէջ արդէն սկսել են դասաւորել իրեղենները, իսկ կանայք պիտի բաժնեն, որոնք դեռ մօտաւորապէս անգամ կարգի չեն բերված: Սպասվում են դեռ շատ էկզոտիկներ. որոնք խոստացել են ներկայ լինել իրանց նիւթերով:

Ինչպէս մեզ հաղորդում են, ուրբաթ, սեպտեմբերի 15-ին, անշուշտներ ըստ իր թաւորի դահլիճում ռուսաց օպերետային խումբը՝ պ. Ֆորկատիի ղեկավարութեամբ կը սկսի իր ներկայացումները: Խումբը կազմված է բաւական աջող կերպով: Այդ խմբի մէջ կան այնպիսի անուններ, որոնք առաջին տեղին են բունում ռուսաց օպերետի մէջ, ինչպէս օրինակ. ա. տ. Բոտմիրովա, Տերոցիայա, պ. Լոյի և այլն: Հաւանական է, որ ընկեն որ օպերետի խումբը աշողութիւն կունենան:

Կենդանիների հովանաւորութեան ռուսաց ընկերութիւնը հեռագրով Պետերբուրգից յայտնել է Թիֆլիսի Կենդանիների հովանաւորութեան ընկերութեան, որ նա յանձնում է այստեղի ընկերութեան կարգադրութեանը՝ թէ ընկերութեան և անտղան անդամներին և թէ Կովկասեան ցուցահանդէսի էկզոտիկներին վարձատրելու համար հետեւեալ պարգևները. — 6 ոսկէ մեդալ, 10 արծա-

եկեղեցու մէջ օրէնք կայ որ քահանան իրան խոստովանածը ուրիշին պատմէ... եւ թողնում եմ այդպիսի հաւատը, և գնում եմ մի այնպիսի հաւատ ընդունելու, որ չունի խոստովանանք, որ նրա միջոցով մի ամբողջ տուն քանդէ... Իսկ եթէ չը կայ... նորէն գնում եմ ուրիշ հաւատ ընդունելու... Եւ դուրս տալով դէպի դուռը գնաց, բայց այնտեղ յանկարծ կանգ առաւ, դարձաւ, նայեց սրբազանին և ստաց դառն ժպիտով:

— Հա, եթէ ուղում ես իմանալ թէ ինչ եղաւ խնամքած եղբայրս՝ հարցուր տէր-Գրիգորին, որը այսօր թաղից նրան... Եւ դուրս գնաց, հանդարտ քայլերով իջաւ սանդուղանիցից ու մտաւ գերեզմանոց... Երբ անցնում էր բաղից, ամեն ոք լսեց թէ ինչպէս այդ ծերունին դուռը կատաղի ձայնով:

— Թէ կայ—կուրանամ, թէ չը կայ—նորէն կուրանամ: Եւ մի դառն քրքիջ արձակելով մտաւ գերեզմանատուն... Այն միջոցին երբ ծերունին դուրս էր գնում, սրբազանի մօտ մտաւ տէր-Մարտիրոսը մի քանի ձեռքը բռնած:

— Համարձակ, սաեց նրան ականջին սրբազանի ծառան— համարձակ եղիր և տուր ոսկիները, թէ չէ բանդ բուրդ է:

— Սրբազանը դեռ ևս գտնվում էր մի տեսակ

ապշտութեան մէջ:

Այդ ապշտութիւնից նրան հանեց տէր-Մարտիրոսը, որը զոգողովով մօտեցաւ նրան, բռնեց նրա աչքը և համարեց:

Սրբազանը սխալվեցաւ:

— Ո՞վ է, գոչեց և ապա տեսնելով տէր-Մարտիրոսին, դէմքը խօտովելով վեր թռաւ և գոչեց:

— Դու, և դեռ համարձակվում ես...

— Ինչ անեմ, սրբազան, սաեց քահանան կեղծաւոր ձայնով— ես շատ ժամանակ է եկել եմ, բայց ինձ ներս չը թողին, յարեց նա և սրբազանի մօտ դրաւ տոպրակը...

— Ինչ է այս, հարցրեց խոստովանած սրբազանը:

— Չեմ խոսար՝ որդուց մի 500 ոսկի նուէր իր սրբազանին...

Սրբազանը շոշափեց տոպրակը... նա թոթափեց իրան և դէմքը պարզեց...

— Իրաւ է, տէր-Մարտիրոս, սաեց նա— իրաւ է որ դու այդ խեղճերի հետ այդպէս ես վարվել...

— Ինչ մեղքս պահեմ, սրբազան, սաեց քահանան յանձնարարի ձայնով— որդիներս հաց էին ուղարկում...

— Խոտովանանքը որքին ես յայտնել...

— Եւ սրբազան, բաւ լիցի, ես յարեղ եմ մեր սուրբ եկեղեցու օրէնքը, իմ բերնից երեքը խոս

տովանանքը դուրս չի ելեր... կտրվէր իմ լեզուն, եթէ այդպէս մի բան անէի...

— Հիմ, ծիծաղեց սրբազանը— բաւական խորամանկն ես եղել տէր-Մարտիրոս, բայց զիտեմ, ծերունին վաղը պիտի գայ պատասխան ստանալու... աղմուկ պիտի հանէ...

— Դրա ճարը ես մտածել եմ, սրբազան, Սարգիսին հրամայեք, որ երբ ծերունին գայ, վաճել է և ներս չը թողնէ, թող սա է թէ ծերունի խնդի է և կարող է սրբազանին վնասել...

— Լաւ ասեցիր, զիտեց սրբազանը— դրանով կազատուինք աղմուկից... և դառնալով դէպի դուռը՝ ծառային կանչեց:

Սարգիսը խիղճն նրա վազեց:

Սրբազանը կրկին նրան տէր-Մարտիրոսի խօսքերը:

— Այլ ես պէտք չը կայ, սրբազան, դիտեց ծառան:

— Ինչու, գոչեցին երկուսն էլ:

— Երբեք խնամքած... նրան, գերեզմանատունից, ուր նա կամեւում էր եղբոր գերեզմանը քանդել, տուն տարան...

Երկու կրօնաւորները մի խոր և ազատ շունչ առին...

— Ազատվեցանք... սաեց տէր-Մարտիրոսը:

— Ինչու էլ ազատվեց... մրմռաց սրբազանը...

